ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 1-ին, Նոր Կիրակիի որը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագից հետո, ամբողջ միաբանության մասնակցությամբ, կատարվեց հոգեհանգիստ համաշխարհային վերջին պատերազմների բյուրավոր նահատակների հիշատակին։

***

Մայր Աթոռ վերադարձավ Բաքվի և Թուրքմենիստանի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանը, որն արձակվելով Բաքվի թեմի առաջնորդական պաշտոնից, նշանակվեց Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի առաջնորդ ու մեկնեց իր նոր պաշտոնատեղին։

***

Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդ բարձրապատիվ Տ. Կարապետ վարդապետ Ասլամազյանը արձակվելով փոխանորդական պաշտոնից, կանչվեց Մայր Աթոռ և նշանակվեց ժամարար Ս. Էջմիածնի Մայր Տաճարում։

***

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Ավագ շաբթվա և զատկական տոների (հին տոմարով) արարողությունները զեկավարելու համար Թբիլիսի մեկնեց բարձրապատիվ Տ. Սահակ Ծ. վարդապետը։

***

Ռումինահայ թեմի առաջնորդ բարձրապատիվ Տ. Վազգեն Ծ. վարդապետ ժամանեց Մայր Աթոռ, եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում ընդունելու։

***

Վեհափառ Հայրապետի կողմից, որպես հայրապետական պատվիրակներ, Անթիլիաս մեկնեցին Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը և պրոֆ. Ա. Աբրահամյանը, Մեծի Տանն Կիլիկիո Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գարեգին Ա. հիվանդ Կաթողիկոսին այցելելու և նրա շուտափույթ ապաքինման համար Ամենայն Հայոց Հայրապետի բարեմաղթությունները հաղորդելու համար։

***

Հոփսիմյանց, Գայանյանց և Շողակաթի տոներին Ս. Պատարագներ մատուցվեցին վկայուհիների հիշատակին կառուցված Ս. Հռիփսիմյանց, Գայանյանց և Շողակաթի վանքերում, Մայր Աթոռի միաբանության և հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ։

***

Ս. Էջմիածնի տոնին Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց, որից հետո կատարվեց Հայրապետական մաղթանք։ Պատարագիչն էր Ռումինահայ թեմի առաջնորդ բարձրապատիվ Տ. Վազգեն Ծ. վարդապետը, որը և ըստ պատշաճի քարոզ խոսեց։

***

Հունիսի 17-ին Ս. Աստվածածնի տիրդտման տոնին, Նորին Ս. Օծության Տ. Տ. Գեորգ Զ. Մայրագույն Պատրիարքի և Կաթողիկոսի վեցերորդ տարեդարձին, Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցվեց, որից հետ-

տո հանդիսադրությամբ ծերունազարդ Հայրապետի՝ կատարվեց Հայրապետական մատթանք։ Ըստ պատշաճի խոսեց Գերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը, մաղթելով Վեհափառ Հայրապետին ուժ, կորով և արևշատություն։

Մոտ երկու ժամ տևեց ներկա եղող բազմության Վեհափառ Հայրապետի Ս. Աջը համբուրելը և օրհնություն ստանալը։

Վեհարանում եղավ ընդունելություն և շնորհավորություններ։ Ստացվեցին բազմաթիվ շնորհավորական հեռագրեր։

***

Հոգևոր Ճեմարանում սկսվեցին տարեվերջի քննությունները։ Ուսումնական տարվա ամփոփման հանդեսում ներկա գտնվեց Վեհափառ Հայրապետը։

***

Մայիսի 9-ին Մայր Աթոռ ժամանեցին Իտալիա-ՍՍՌՄ ընկերության պատվիրակության անդամները, որոնք ավագ լուսաբար բարձրապատիվ Տ. Սահակ Ծ. վարդապետի ուղեկցությամբ առաջնորդվեցին Մայր Տաճարը, դիտեցին թանգարանը և եղան Վեհարանում։ Վեհարանում հյուրերին ընդունեց Գերաշնորհ Տ. Ռուբեն արքեպիսկոպոսը։

Հյուրերի վրա մեծ տպավորություն թողեցին հինավուրց տաճարը, թանգարանի սրբությունները և Վեհարանը։

Հյուրերն իրենց գոհունակությունը հայտնեցին Մայր Աթոռում իրենց նկատմամբ ցուցաբերված ուշադրության համար։

***

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, հաշվետվություն ներկայացնելու համար Մայր Աթոռ ժամանեցին Բաքվի առաջնորդական փոխանորդ Տ. Վարդգես ավագ քահանա Գրիգորյանը, Բաքվի հայոց եկեղեցու ավագերեց Տ. Վարդան ավագ քահանա Տեր-Սահակյանը և Վրաստանի թեմի թեմական խորհրդի անդամ Հ. Տեր-Հարությունյանը։